ՆԱԽԱԳԻԾ-Ա

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» _____ 2023թ. **№_____-Ա**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով հողային օրենսգրքի 3–րդ հոդվածի 1-ին կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14^3-րդ հոդվածի 9-րդ և 12-րդ մասերի, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 20.1 կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի հ.1920-Ն որոշումը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Ն.Գոգոլի փողոց հ.24 հասցեում գտնվող սեփականության իրավունքով Ալեքսան Բյուզանդյանին, Վարդան Վարդանյանին, Գեորգես Թաֆնկաջիին և Շանթ Թաֆնկաջիին պատկանող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.11052022-01-0143 վկայական/ 0.1345հա և 0.020965հա մակերեսներով հողամասերի նպատակային նշանակությունը փոխել «բնակավայրերի» հողերի կատեգորիայի:
2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում, օրենսդրությամբ սահմանված կարգով, տեղեկացնել Կադաստրի կոմիտեին և Քաղաքաշինության կոմիտեին՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայացվող նախագծով առաջարկվում է Երևան քաղաքի Ն.Գոգոլի փողոց հ.24 հասցերում գտնվող սեփականության իրավունքով Ալեքսան Բյուզանդյանին, Վարդան Վարդանյանին, Գեորգես Թաֆնկաջիին և Շանթ Թաֆնկաջիին պատկանող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.11052022-01-0143 վկայական/ 0.1345հա և 0.020965հա մակերեսներով հողամասերի նպատակային նշանակությունները «բնակավայրերի» հողերի կատեգորիայի դասակարգելու հարցը:

ՀՀ կառավարության 15.12.2005թ. հ.2330-Ն որոշումով հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծում ամրագրված պայմանական նշաններով քննարկման ներկայացված հողամասերը ներառված են անցումային-բուֆերային հողերի կազմում:

Քննարկվող անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.11052022-01-0143 վկայականում հողամասերի նպատակային նշանակությունը ամրագրված է արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական, իսկ գործառնական նշանակությունը՝ արդյունաբերության օբյեկտների:

Ն.Գոգոլի փողոց հ.24 հասցեում գտնվող 0.1345հա և 0.020965հա մակերեսներով հողամասերում գործող օրենսդրության շրջանակներում Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացվող պահանջներին և պայմաններին համապատասխան տրամադրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա նախատեսվում է իրականացնել բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնակելի նշանակության օբյեկտները նախատեսված են բնակավայրերի նպատակային նշանակության հողերի կազմում, անհրաժեշտություն է առաջացել քննարկվող հողամասերի նպատակային նշանակությունները սահմանել «բնակավայրերի»:

Համաձայն «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-

րդ մասերի՝ համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը և դրանց նախագծման առաջադրանքները համայնքի ղեկավարի ներկայացմամբ քննարկվում են միջգերատեսչական հանձնաժողովի նիստում և հաստատվում են համայնքի ավագանու կողմից՝ միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա:

Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը հավանության է արժանացել ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի հ.1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի կողմից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

Երևան քաղաքի Գոգոլի փողոց հ.24 հասցեում Լևոն Գրիգորյանի պատկանող հողամասի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխության տեղեկանք հիմանվորում

Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխության համար հիմք է հանդիսացել Լևոն Գրիգորյանի դիմումը:

ՀՀ կառավարության 15.12.2005թ. հ.2330-Ն որոշումով հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծում ամրագրված պայմանական նշաններով հողամասն անցումնային-բուֆերային գոտում է:

Անհրաժեշտությունից ելնելով՝ առաջարկում ենք հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունները սահմանել համապատասխանաբար բնակավայրերի և բնակելի կառուցապատման:

Կից՝ տարածքի սխեմաները, հողամասի նպատակային նշանակության փոփոխության մասին տեղեկանք հիմնավորումը և գործին առնչվող փաստաթղթերի ամբողջական փաթեթը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ, ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

ԴԱՎԻԹ ԴԱԼԼԱՔՅԱՆ

6/27/2022

X

ԴԱՎԻԹ ԴԱԼԼԱՔՅԱՆ

Signed by: DALLAKYAN DAVIT 1101830166

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ԵՐԵՎԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՇԱՀԱԳՐԳԻՌ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	15-05-2023 01//11741-2023
Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Գոգոլի 24 հասցեում գտնվող 0.1345հա և 0.020965հա մակերեսով հողամասերի նպատակային նշանակությունները «բնակավայրերի» նպատակային նշանակության հողերի կատեգորիայի դասակարգելու վերաբերյալ հայտնում ենք, որ նախատեսվող տարածքում պատմության և մշակույթի հուշարձաններ առկա չեն, ուստի նախարարությունը ներկայացված առաջարկի վերաբերյալ առարկություններ և դիտողություններ չունի: Միաժամանակ հայտնում ենք, որ համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:	ընդունվել է ի գիտություն
Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Գոգոլի 24 հասցեում գտնվող 0.1345հա և 0.020965հա մակերեսով հողամասերի նպատակային նշանակությունները «բնակավայրերի» նպատակային նշանակության հողերի կատեգորիայի դասակարգելու վերաբերյալ հայտնում ենք, որ նախատեսվող տարածքում պատմության և մշակույթի հուշարձաններ առկա չեն, ուստի նախարարությունը ներկայացված առաջարկի վերաբերյալ առարկություններ և դիտողություններ չունի: Միաժամանակ հայտնում ենք, որ համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:	18-05-2023 01//12285-2023 ընդունվել է ի գիտություն
2. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	16-02-2023 ԳՍ/14.1/4751-2023
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը Երևան քաղաքի Գոգոլի փողոց N 24 հասցեում	ընդունվել է ի գիտություն

գտնվող 01-012-0323-0022 և 01-012-0323-0157 կադաստրային ծածկագրերով 0.1345 հա և 0.020965 հա մակերեսներով հողամասերը, բազմաֆունկցիոնալ բնակելի շենք կառուցելու նպատակով, բուֆերային գոտուց բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերի փոխելու առաջարկության վերաբերյալ առարկություններ չունի՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության գրությամբ ներկայացված պահանջն ապահովելու պայմանով: Կից ներկայացվում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության գրությունը:	
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը Երևան քաղաքի Գոգոլի փողոց N 24 հասցեում գտնվող 01-012-0323-0022 և 01-012-0323-0157 կադաստրային ծածկագրերով 0.1345 հա և 0.020965 հա մակերեսներով հողամասերը, բազմաֆունկցիոնալ բնակելի շենք կառուցելու նպատակով, բուֆերային գոտուց բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերի փոխելու առաջարկության վերաբերյալ դիրքորոշում ներկայացրել է նախարարության 30.05.2023թ. թիվ ԳՍ/14.1/15816-2023 գրությամբ (ի պատասխան Ձեր 10.05.2023թ. թիվ 01/11.2/5718-2023 գրության):	22-06-2023 ԳՍ/14.1/18623-2023
3. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	12-05-2023 01/5/2/2970-2023
Երևան քաղաքի Գոգոլի փողոց N 24 հասցեում գտնվող 01-012-0323-0022 և 01-012-0323-0157 կադաստրային ծածկագրերով 0.1345 հա և 0.020965 հա մակերեսներով հողամասերը, բազմաֆունկցիոնալ բնակելի շենք կառուցելու նպատակով, բուֆերային գոտուց բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերի փոխելու վերաբերյալ Արտակարգ իրավիճակների նախարարությունն առաջարկություններ չունի:	ընդունվել է ի գիտություն
Երևան քաղաքի Գոգոլի փողոց N 24 հասցեում գտնվող 01-012-0323-0022 և 01-012-0323-0157 կադաստրային ծածկագրերով 0.1345 հա և 0.020965 հա մակերեսներով հողամասերը, բազմաֆունկցիոնալ բնակելի շենք կառուցելու նպատակով, բուֆերային գոտուց բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերի փոխելու լրամշակված փաթեթի վերաբերյալ Արտակարգ իրավիճակների նախարարությունն առաջարկություններ չունի:	17-05-2023 01/5/2/3093-2023 ընդունվել է ի գիտություն
4. ՀՀ առողջապահության նախարարություն	12-05-2023 ԱԱ/04/10792-2023
Ի պատասխան Ձեր 2023 թվականի մայիսի 10-ի N 01/11.2/5718-2023 գրության՝ հայտնում եմ, որ Երևան քաղաքի Գոգոլի փողոց N 24 հասցեում գտնվող 01-012-0323-0022 և 01-012-0323-0157 կադաստրային ծածկագրերով 0.1345 հա և 0.020965 հա մակերեսներով հողամասերը, բազմաֆունկցիոնալ բնակելի շենք կառուցելու նպատակով, բուֆերային գոտուց բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերի փոխելու վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան:	ընդունվել է ի գիտություն

Ի պատասխան Ձեր 2023 թվականի մայիսի 17-ի N 01/11.2/6074-2023 գրության՝ հայտնում եմ, որ Երևան քաղաքի Գոգոլի փողոց N 24 հասցեում գտնվող 01-012-0323-0022 և 01-012-0323-0157 կադաստրային ծածկագրերով 0.1345 հա և 0.020965 հա մակերեսներով հողամասերը, բազմաֆունկցիոնալ բնակելի շենք կառուցելու նպատակով, բուֆերային գոտուց բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերի փոխելու վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան:	19-05-2023 ԱԱ/04/11560-2023 ընդունվել է ի գիտություն
5. ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն	18-05-2023 1/02.3/8290-2023
Ի պատասխան Ձեր 2023 թվականի մայիսի 10-ի N 01/11.2/5718 գրության՝ հայտնում եմ, որ շրջակա միջավայրի նախարարությունը Երևան քաղաքի Գոգոլի փողոց N 24 հասցեում գտնվող 01-012-0323-0022 և 01-012-0323-0157 կադաստրային ծածկագրերով, 0.1345 հա և 0.020965 հա մակերեսներով հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխության վերաբերյալ առարկություններ չունի: «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության» մասին օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 7)-րդ կետի «ա» ենթակետին (1500 քմ-ից ավելի կառուցապատման մակերես) համապատասխանելու դեպքում նախատեսվող գործունեությունը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:	ընդունվել է ի գիտություն
Ի պատասխան Ձեր 2023 թվականի մայիսի 17-ի №01/11.2/6074 գրության՝ կապված Երևան քաղաքի Գոգոլի փողոցի 24 հասցեում գտնվող 0.1345 հա և 0.020965 հա հողամասերը, բազմաֆունկցիոնալ բնակելի շենք կառուցելու նպատակով, բուֆերային գոտուց բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերի փոխելու հետ, հայտնում եմ, որ շրջակա միջավայրի նախարարությունն առարկություն չունի: Միաժամանակ տեղեկանում եմ, որ անհրաժեշտ է նախագծի տեխնիկա-տնտեսական ցուցանիշները համապատասխանեցնել ճարտարապետահատակագծային առաջադրանքի և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի հողամասի մակերեսի հետ:	22-05-2023 1/26.15/8467-2023 ընդունվել է ի գիտություն
6. ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	15-05-2023 01/8971-2023
Ի պատասխան Ձեր ս. թ. մայիսի 11-ի N 01/11.2/5718-2023 գրության՝ Երևան քաղաքի Գոգոլի փողոց N 24 հասցեում գտնվող 01-012-0323-0022 և 01-012-0323-0157 կադաստրային ծածկագրերով 0.1345 հա և 0.020965 հա մակերեսներով հողամասերը, բազմաֆունկցիոնալ բնակելի շենք կառուցելու նպատակով, բուֆերային գոտուց բնակավայրերի բնակելի կառուցապատման	ընդունվել է ի գիտություն

հողերի փոխելու վերաբերյալ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունն առաջարկություններ և առարկություններ չունի:	
Ի պատասխան Ձեր ս. թ. մայիսի 17-ի N 01/11.2/6074-2023 գրության՝ Երևան քաղաքի Գոգոլի փողոց N 24 հասցեում գտնվող 01-012-0323-0022 և 01-012-0323-0157 կադաստրային ծածկագրերով 0.1345 հա և 0.020965 հա մակերեսներով հողամասերը, բազմաֆունկցիոնալ բնակելի շենք կառուցելու նպատակով, բուֆերային գոտուց բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերի փոխելու վերաբերյալ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունն առաջարկություններ և առարկություններ չունի:	23-05-2023 01/9646-2023 ընդունվել է ի գիտություն
7. ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	19-05-2023 N 01/11.1/5054-2023
Ի պատասխան Ձեր 2023 թվականի մայիսի 10-ի և մայիսի 17-ի թիվ 01/11.2/5718-2023 և թիվ 01/11.2/6074-2023 գրությունների՝ հայտնում ենք, որ Երևան քաղաքի Գոգոլի փողոց N 24 հասցեում գտնվող 01-012-0323-0022 և 01-012-0323-0157 կադաստրային ծածկագրերով 0.1345 հա և 0.020965 հա մակերեսներով հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու վերաբերյալ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունն իր իրավասությունների շրջանակում առաջարկություններ և առարկություններ չունի: Միաժամանակ, ներկայացվում են Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցող ընկերությունների դիրքորոշումները: Դիտողություններ չկան:	ընդունվել է ի գիտություն
8. ՀՀ կադաստրի կոմիտե	18-05-2023 N ՍԹ/6499-2023
Ձեր 2023 թվականի մայիսի 10-ի N 01/11.2/5718-2023 գրությամբ ներկայացված Երևան քաղաքի գլխավոր հատակագծում փոփոխություն (0.1345 հա և 0.020965 հա հողամասերի նպատակային նշանակության փոփոխություն) կատարելու առաջարկության վերաբերյալ հայտնում ենք հետևյալը. Քննարկման ներկայացված հողաշինարարական գործում չեն ներառվել ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված ՀՀ համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգի 56-րդ կետով պահանջվող ամբողջական փաստաթղթերը: Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք հողաշինարարական գործը վերադարձնել լրամշակման:	

Ձեր 2023 թվականի մայիսի 17-ի N 01/11.2/6074-2023 գրությամբ ներկայացված Երևան քաղաքի գլխավոր հատակագծում փոփոխություն (0.1345 հա և 0.020965 հա հողամասերի նպատակային նշանակության փոփոխություն) կատարելու առաջարկության լրամշակված տարբերակի վերաբերյալ հայտնում ենք, որ Կադաստրի կոմիտեի 2023 թվականի մայիսի 17-ի N ՍԹ/6499-2023 գրությամբ նշված դիտողությունը հաշվի չի առնվել և հողաշինարարական գործը չի ներկայացվել ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված ՀՀ համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգի 56-րդ կետի պահանջներին համապատասխան : Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք հողաշինարարական գործը վերադարձնել լրամշակման:	25-05-2023 ՍԹ/6938-2023
Ձեր 2023 թվականի օգոստոսի 28-ի N 01/11.2/11249-2023 և ի լրումն ներկայացված 2023 թվականի սեպտեմբերի 4-ի N 01/11.2/11453-2023 գրություններով Երևան քաղաքի գլխավոր հատակագծում փոփոխություն (0.1345 հա և 0.020965 հա հողամասի նպատակային նշանակության փոփոխություն) կատարելու առաջարկության լրամշակված տարբերակի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունենք՝ հիմք ընդունելով լրացուցիչ ներկայացված փաստաթղթերը:	05-09-2023 ՍԹ/12070-2023 ընդունվել է ի գիտություն
9. ՀՀ ներքին գործերի նախարարություն	11-05-2023 14/17/58569-23
Ձեր 10.05.2023թ. №01/11.2/5718-2023 գրությանն պատասխան տեղեկացնում եմ, որ ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանությունում ուսումնասիրվել Երևան քաղաք Գոգոլի փողոց N 24 հասցեում գտնվող 01-012-0323-0022 և 01-012-0323-0157 կադաստրային ծածկագրերով 0.1345 հա և 0.020965 հա մակերեսներով հողամասերը, բազմաֆունկցիոնալ բնակելի շեն կառուցելու նպատակով, բուֆերային գոտուց բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերի փոխելու վերաբերյալ առաջարկությունը: Առաջարկություններ և դիտողություններ չկան:	ընդունվել է ի գիտություն
Ձեր 17.05.2023թ. №01/11.2/6074-2023 գրությանն ի պատասխան տեղեկացնում եմ, որ ՀՀ ՆԳՆ ոստիկանության ճանապարհային ոստիկանությունում ուսումնասիրվել է Երևան քաղաքի Գոգոլի փողոց N 24 հասցեում գտնվող 01-012-0323-0022 և 01-012-0323-0157 կադաստրային ծածկագրերով 0.1345 հա և 0.020965 հա մակերեսներով հողամասերը, բազմաֆունկցիոնալ բնակելի շենք կառուցելու նպատակով, բուֆերային գոտուց բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերի փոխելու վերաբերյալ լրամշակված փաթեթը:	17-05-2023 14/17/61603-23 ընդունվել է ի գիտություն

Առաջարկություններ և դիտողություններ չկան:	
10. Հայաստանի շինարարների միություն	
Սահմանված ժամկետում կարծիք չի ներկայացվել	
11. Ճարտարապետների պալատ	
Սահմանված ժամկետում կարծիք չի ներկայացվել	
12. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին	23-05-2023 ՔՏՄ/13.5/10810-23
Ի պատասխան Ձեր N 01/11.2/5718-2023 գրության՝ ՀՀ Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող Գոգոլի փողոց N 24 հասցեում գտնվող ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող 01-012-0323-0022 կադաստրային ծածկագրով 0.1345հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության արդյունաբերական օբյեկտների և 01-012-0323-0157 կադաստրային ծածկագրով 0.020965հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության խառը կառուցապատման հողամասերից, բազմաֆունկցիոնալ բնակելի շենք կառուցելու նպատակով, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասերի փոխելու վերաբերյալ՝ հայտնում եմ, որ ներկայացված փաթեթում բացակայում են ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 56-րդ կետի 2-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերով նախատեսված՝ հողամասի տեղադիրքը գլխավոր հատակագծի հիմնական գծագրի վրա՝ 1:10000 կամ 1:5000 մասշտաբով արտացոլող հատակագիծը, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածին առնչություն ունենալու և հողամասին առնչվող այլ սահմանափակումների վերաբերյալ տեղեկանքը և համայնքի ղեկավարի տեղեկանք-հիմնավորումը՝ համայնքի համար նախատեսվող օբյեկտի կարևորության, գլխավոր հատակագծով նախատեսված հեռանկարային և առաջարկվող փոփոխության անհրաժեշտության վերաբերյալ փաստաթղթերը, ուստի տեսչական մարմինը վերոնշյալ հողամասերի նպատակային նշանակության փոփոխության վերաբերյալ իր կարծիքը կհայտնի լրամշակված փաթեթը ներկայացնելուց հետո:	
Ի պատասխան Ձեր N01/11.2/11249-2023 գրության՝ ՀՀ Երևան քաղաքի Գոգոլի փողոց N 24 հասցեում գտնվող 01-012-0323-0022 և 01-012-0323-0157 կադաստրային ծածկագրերով 0.1345 հա և 0.020965 հա մակերեսներով հողամասերը, բազմաֆունկցիոնալ բնակելի շենք կառուցելու նպատակով, բուֆերային գոտուց բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերի փոխելու	30-08-2023 ՔՏՄ/13.6/19315-23 ընդունվել է ի գիտություն

վերաբերյալ հայտնում եմ, որ տեսչական մարմինն առարկություններ չունի:	